**Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության**

**ե ր և ա ն յ ա ն գ ր ա ս ե ն յ ա կ**

**ք. Երևան, 2007թ. հունվար**

## 2006թ. գրասենյակի կողմից իրականացված գործունեության ամփոփում

Իր լայն մանդատի շրջանակներում ԵԱՀԿ գրասենյակը շարունակել է աջակցել ՀՀ իշխանություններին և քաղաքացիական հասարակությանը ԵԱՀԿ հիմնական սկզբունքներն ու արժեքները խթանելու հարցում: Գրասենյակն իրավական և քաղաքականության հարցերին առնչվող փորձագիտություն է տրամադրել՝ կապված ընտրությունների, թրաֆիկինգի դեմ պայքարի, միգրացիայի, լրատվամիջոցների և ՓՄՁ զարգացման, ինչպես նաև մարդու իրավունքների, լրատվամիջոցների ազատության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության, շրջակա միջավայրի պաշտպանության և երիտասարդների առաջնորդության կարողությունների զարգացման հետ: Գրասենյակն ակտիվացրել է հակակոռուպցիոն իր աշխատանքները և օգնել իշխանություններին կիբերհանցագործության դեմ պայքարի գործում: Այն նաև շարունակել է ընտրությունների, հակակոռուպցիոն, մարդու իրավունքների պաշտպանի, լրատվամիջոցներին առնչվող օրենսդրության և կիբերհանցագործության հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի գործունեության համակարգումը:

ԵԱՀԿ գրասենյակն ընդլայնել է իր գործունեության շրջանակը՝ Սյունիքի մարզում ստեղծելով տնտեսական և բնապահպանական ծրագրերի իրականացման առաջին ներկայացուցչությունը և բնապահպանության հանրային տեղեկատվական «Օրհուս» կենտրոնների ցանցը տարածելով մարզերում: Իրականացման ակտիվ փուլում են գտնվում երկու խոշոր ծրագրեր՝ հրթիռային վառելիքի բաղադրիչի (մելանժի) օգտահանում և ոստիկանության ու բնակչության միջև վստահության մթնոլորտի և փոխգործակցության հաստատում:

***<u>Ռազմաքաղաքական ոլորտ</u>***

***Ոստիկանության աջակցության ծրագիր.*** Ոստիկանության աջակցության ծրագիրը, որ կազմում է ռազմաքաղաքական ոլորտում գրասենյակի կողմից իրականացվող աշխատանքների զգալի մասը, ուղղված է ոստիկանության և բնակչության միջև վստահության ձևավորմանը, հասարակության և ոստիկանության միջև փոխգործակցության ժամանակակից մոդելի մշակմանը: Ծրագրի շրջանակներում 2006թ. ընթացքում իրականացվել են մի շարք աշխատանքներ: Ավարտվել է ոստիկանության ուսումնական կենտրոնի վերանորոգումը, որին հաջորդել են այլ աշխատանքներ՝ ժամանակակից ուսումնական սարքավորումների տրամադրում և միջազգային չափանիշներին համապատասխանող ուսումնական ծրագրի մշակում: Սկսվել է նաև Արաբկիրի

համայնքում ոստիկանության և բնակչության միջև փոխգործակցության մոդելի ներդրման ծրագիրը: Այս ծրագրի բացման սեմինարը տեղի է ունեցել հոկտեմբերի 31-ին, որից հետո միջազգային փորձագետները սկսել են ոստիկանության և բնակչության միջև փոխգործակցության, ինչպես նաև խնդիրների լուծման թեմաներով ուսուցման ծրագրերի և սեմինարների շարքը Արաբկիր համայնքի ոստիկանության, ինչպես նաև բնակչության հետ անմիջական կապ ունեցող այլ վարչությունների աշխատակիցների համար:

***Կիբերանվտանգության հզորացում և պայքար կիբերհանցավորության դեմ.*** 2006թ. ընթացքում ԵԱՀԿ գրասենյակը շարունակել է աջակցել Կիբերանվտանգության հարցերով զբաղվող ազգային աշխատանքային խմբին, որի անդամներն են Ազգային անվտանգության, ոստիկանության, Ազգային ժողովի և ՀՀ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչները: Այն գործում է օրենսդրության և տեղեկատվության անվտանգության ընթացակարգերը բարելավելու ու Կիբերհանցավորության դեմ եվրոպական կոնվենցիայի հիման վրա կիբերհանցավորության դեմ պայքարելու համար կառավարության կարողությունները հզորացնելու նպատակով: 2006թ. մարտին կիբերհանցավորության վերաբերյալ իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպվել է կլոր սեղան, որը համընկել է Հայաստանի կողմից կոնվենցիայի վավերացման օրվա հետ: Բացի այդ մշակվել է նաև Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվության պաշտպանության մասին օրենքի հայեցակարգ, որը մարտ ամսին տեղի ունեցած կլոր սեղանի նյութերի ժողովածուի հետ միասին ներկայացվել է դեկտեմբերին տեղի ունեցած շնորհանդեսի ժամանակ:

***ՀՀ պաշտպանության նախարարության միացումը ԵԱՀԿ հաղորդակցության ցանցին.*** ԵԱՀԿ հաղորդակցության ցանցը համակարգչային ապահով համակարգ է և Վստահության ու անվտանգության ապահովության կառուցման միջոց, որն օգտագործվում է 1999թ. Վիեննայի փաստաթղթով, Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրով, Բաց երկնքի մասին պայմանագրով և ԵԱՀԿ այլ պաշտոնական փաստաթղթերով նախատեսված ռազմական տեղեկությունները փոխանակելու նպատակով: Վստահության ու անվտանգության ապահովության կառուցման միջոցառումների ներդրման հարցում աջակցելը ԵԱՀԿ ռազմաքաղաքական ոլորտի հիմնական առաջադրանքներից մեկն է: 2006թ. ԵԱՀԿ քարտուղարության աջակցությամբ գրասենյակը օգնել է ՀՀ պաշտպանության նախարարությանը համապատասխան սարքավորումների, տեխնիկական աջակցության և ցանցին միանալու համար ուսուցման հարցում:

***<u>Տնտեսական և բնապահպանական ոլորտ</u>***

***Մելանժի՝ հրթիռային վառելիքի բաղադրիչի վնասազերծում Հայաստանի Հանրապետությունում.*** 2006թ. մայիսի 12-ին ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Մարկ Պեղա դը Բրիշամբոն ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հրավերով մասնակցեց Հայաստանի հյուսիսում գտնվող Ղալթախչի գյուղում մելանժի՝ հրթիռային վառելիքի բաղադրիչի վերամշակման կայանքի բացման արարողությանը:

Ծրագրում հաշվի է առնված առկա ենթակառուցվածքը և կլիմայական պայմանները, ինչպես նաև գտնվելու վայրը, մելանժի քանակը և վիճակը՝ ապահովելով.

- կուտակման վայրում էկոլոգիապես մաքուր վերամշակում.
- կայանքի կառուցում՝ գոյություն ունեցող նյութերի կիրառմամբ.
- ողջ գործընթացի համակողմանի վերահսկում.
- համապատասխան կերպով վերապատրաստված մարզի աշխատուժի ներգրավում:

Տնտեսական, բնապահպանական և ռազմաքաղաքական միջ-ոլորտային ծրագրի նպատակը առկա 872 տոննա խիստ թունավոր և ագրեսիվ նյութի վերամշակումն է էկոլոգիապես անվնաս եղանակով՝ վերածելով այն հանքային պարարտանյութի, որը պետք է կիրառվի ցածր pH ունեցող ցանքատարածքներում: Նոյեմբերի 1-ի դրությամբ՝ ձմեռային ընդմիջումից առաջ, վնասազերծվել է 454 մելանժ (հասնելով 52%-ի): Պլանավորվում է վերամշակումը վերսկսել 2007թ. ապրիլին՝ ըստ նախատեսվածի մելանժի օգտահանումը մինչև 2007թ. օգոստոսը ավարտելու նպատակով:

*Տեղեկություն.* Խորհրդային Միության փլուզումից հետո Կարմիր բանակը Հայաստանի Հանրապետության տարածքում թողեց 872 տոննա հրթիռային վառելիքի բաղադրիչ, որը մելանժ կոչվող հեղուկ օքսիդ է: Այն խիստ թունավոր և ագրեսիվ նյութ է, որը վնասակար է բնակչության և շրջակա միջավայրի համար:

2004թ. ապրիլի 22-ին ՀՀ պաշտպանության նախարարը պաշտոնապես դիմել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավարին՝ մելանժը վնասազերծելու հարցում տեխնիկական և ֆինանսական օգնություն ցուցաբերելու խնդրանքով: ԵԱՀԿ գրասենյակն իր պատրաստակամությունն է հայտնել օգնել՝ փուլային մոտեցման կիրառմամբ՝ սկսելով միջազգային փորձագետների խմբի կողմից իրականացվող տեխնիկատնտեսագիտական ուսումնասիրությունից:

Ծրագիրը գործում է 2005թ. նոյեմբերի 7-ից՝ ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնական խնդրանքի հիման վրա:

ՀՀ բնապահպանության նախարարությունը սերտորեն համագործակցում է ծրագրի իրականացման ընթացքում և բնապահպանական հարցերում տրամադրում է փորձագիտություն և մոնիտորինգ:

***Սյունիքի մարզում ծրագրերի իրականացման ներկայացուցչության բացում.*** 2006թ. հունիսի 30-ին ԵԱՀԿ գրասենյակը Սյունիքի մարզկենտրոն Կապանում բացեց ծրագրերի իրականացման ներկայացուցչություն՝ տեղի իշխանություններին և հանրությանը մարզում տնտեսական աճը խթանելու նպատակով տեղական և օտարերկրյա ներդրումներ ներգրավմանն աջակցելու համար: Այն նաև զբաղվելու է մարզի բնապահպանական ռիսկերով. մարզ, որը իր գեղեցկությամբ հայտնի լինելուց բացի, հանքարդյունաբերական խոշոր վայր է հանդիսանում: Այս նախաձեռնության համար հիմք է հանդիսացել ԵԱՀԿ-ի և Հայաստանի Հանրապետության միջև կնքված փոխըմբռնման հուշագրի լրացուցիչ արձանագրությունը, որով ծրագրային ներկայացուցչություններ բացելու իրավական հիմք է ստեղծվում Հայաստանի մարզերում ԵԱՀԿ ծրագրերն իրականացնելու համար: Այն ստորագրվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի

ղեկավար, դեսպան Վլադիմիր Պրյախինի և ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի կողմից:

***Աջակցություն ՓՄՁ զարգացմանը.*** Գրասենյակը սերտորեն համագործակցել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի հետ՝ ՓՄՁ զարգացման պետական քաղաքականության և համապատասխան ծրագրերի մշակման, իրականացման և վերահսկման համար: Գրասենյակը նաև աջակցել է «*Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2004-2005թթ.*» գրքույկի մշակման և հրատարակության հարցում, որը մի համապարփակ գործիք է քաղաքականություն մշակողների, տեղի և միջազգային գործարար համայնքի և հետազոտական կենտրոնների համար: Գրասենյակի նախաձեռնությամբ և հանձնարարությամբ մշակվել է ցուցանիշների համակարգ, որի նպատակը կառավարության կողմից ֆինանսավորվող ՓՄՁ աջակցության արդյունավետության գնահատումն է: Ցուցանիշների համակարգը ներքին և արտաքին գնահատումների համար կիրառելու եղանակները բացատրող մեթոդական համապատասխան ուղեցույցի շնորհանդեսը տեղի ունեցավ 2006թ. նոյեմբերի 22-ին Կիևում տեղի ունեցած տարածաշրջանային երկօրյա սեմինար-խորհրդակցության ժամանակ: Գրասենյակի նախաձեռնությամբ նաև ԵԱՀԿ-ի «*Լավագույն փորձի ուղեցույց գործարարության և ներդրումների բարենպաստ միջավայրի համար*» գիրքը թարգմանվեց հայերեն և տրամադրվեց շահագրգիռ կողմերին, որոնք ողջունեցին հրատարակությունը՝ որպես օգտակար գործիք գործարար միջավայրը առավել բարելավելու և ներքին ու օտարերկրյա ներդրումների համար վարչական խոչընդոտները վերացնելու համար:

***Օրհուսի կոնվենցիայի սկզբունքների խթանում.*** Գրասենյակը շարունակել է օգնել ՀՀ կառավարությանը՝ բնապահպանական տեղեկատվության մատչելիությունը հանրության համար բարձրացնելու, որոշումների կայացմանը մասնակցելու և շրջակա միջավայրին առնչվող հարցերում արդարադատության մատչելիությունը բարձրացնելու գործում, որոնք հանդիսանում են 2001թ. Հայաստանի կողմից վավերացված Օրհուսի կոնվենցիայի երեք հիմնասյուները: Գրասենյակի աջակցությամբ Օրհուսի նոր կենտրոններ են բացվել Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերում: Շրջակա միջավայրի վերաբերյալ քաղաքականության ձևավորման և իրազեկության բարձրացման ոլորտում հանդիսանալով միջանկյալ օղակ պետական իշխանությունների և հասարակական կազմակերպությունների միջև՝ կենտրոնները օգնում են ստեղծել թափանցիկ միջավայր բնապահպանական խնդիրներին առնչվող հարցերում և նպաստում են մարզերում ժողովրդավարացման ու արդյունավետ կառավարման գործընթացներին:

***<u>Մարդու իրավունքների ոլորտ</u>***

***Աջակցություն մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմեն) կառույցին.*** Գրասենյակը խթանել և աջակցել է մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին, օգնել է կարողությունների զարգացման հարցում՝ ուսուցման և փորձի փոխանակման ծրագրեր կազմակերպելով աշխատակազմի համար և շարունակել է համակարգել օմբուդսմենի ինստիտուտի հարցերով աշխատանքային խմբի գործունեությունը, որի անդամներ են հանդիսանում

մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, ինչպես նաև ԵԱՀԿ անդամ պետությունների դեսպանությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները: ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի /ԺՀՄԻԳ/ հետ համատեղ գրասենյակն աջակցել է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հզորացմանը՝ կազմակերպելով Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի այցելությունը Լիտվայի (Սեյմաս) Օմբուդսմենի հաստատություն:

***Աջակցություն դատախազությանը.*** Գրասենյակը և ԺՀՄԻԳ-ը ՀՀ դատախազության համար սկսել են աջակցության ծրագիր, որի նպատակն է օգնել դատախազներին և քննիչներին ավելի լավ հետևելու մարդու իրավունքներին և արդար դատավարության միջազգային չափանիշներին: Ծրագրի շրջանակներում դատախազության ուսումնական կենտրոնում դատախազների և քննիչների համար կազմակերպվել է ուսուցում ընտանեկան բռնության դեպքերի և սեռական հողի վրա հանցագործությունների հետաքննման վերաբերյալ: ԺՀՄԻԳ-ի հետ համատեղ գրասենյակն աջակցել է «*Եվրոպական երկրների և ԱՄՆ-ի դատական համակարգերը*» գրքի հայերեն տարբերակի հրատարակությանը, որը պատրաստվել է Դատախազության ուսումնական կենտրոնի կողմից:

***Աջակցություն փաստաբանների պալատին.*** Գրասենյակը շարունակել է հանգամանորեն հետևել Փաստաբանության մասին օրենքի իրականացմանը: Գրասենյակն աջակցել է պալատի պաշտոնական ինտերնետային կայքի մեկնարկմանը և Եվրոպայի խորհրդի հետ համատեղ կազմակերպել Մարդու իրավունքների եվրոպական չափանիշների ուսուցում Երևանի ու մարզերի փաստաբանների ու հանրային պաշտպանների համար:

***Քրեակատարողական հիմնարկների վերահսկում.*** Գրասենյակը շարունակել է աջակցել ՀՀ արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության կալանավայրերում հասարակական դիտորդների խմբին: Խումբն իրականացնում է հանրային վերահսկողություն՝ հետևելով և անցկացնելով քրեակատարողական հաստատություններում գտնվող անձանց իրավունքների պաշտպանության մոնիտորինգ: Գրասենյակը խմբի համար կազմակերպել է ևս երկու ուսուցում և աջակցել է նրանց գործունեության տարեկան հաշվետվության հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակմանը: 2006թ. հաշվետվությունը եղել է շատ ավելի բարձր մակարդակի և պարունակել է կառուցողական դիտողություններ՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից: Գրասենյակը նախատեսում է շարունակել իր աջակցությունն այս խմբին:

***Քրեակատարողական համակարգի կարողությունների զարգացում/ Այլընտրանքային պատժամիջոցներ.*** 2006թ. հուլիսին ՀՀ արդարադատության նախարարության աշխատակիցների և փորձագետների համար ՀՀ արդարադատության նախարարության վերանորոգված ուսուցման կենտրոնում ԺՀՄԻԳ-ի հետ համատեղ կազմակերպվել է երկու սեմինար-խորհրդակցություն այլընտրանքային պատժամիջոցների թեմայով: Գրասենյակը նաև աջակցել է քրեակատարողական հաստատությունների և այլընտրանքային պատժամիջոցների բաժնի աշխատակիցների համար ձեռնարկի տպագրմանը:

Գրասենյակը կշարունակի համագործակցությունը ՀՀ արդարադատության նախարարության հետ այս ոլորտներում:

***Ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խումբ.*** Գրասենյակն աջակցել է Ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ստեղծմանը, որը 2006թ. ընթացքում իրականացրել է եռամսյա փորձնական ծրագիր: Գրասենյակն աջակցել է վերահսկողություն իրականացնող խմբի աշխատանքներին՝ խմբի անդամների համար կազմակերպելով վերապատրաստում և աջակցելով նրանց հաշվետվությունները հրատարակելու հարցում:

***Մարդու իրավունքների իրավիճակը բանակում.*** 2004-2005թթ. գրասենյակն իրականացրել է Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների մոնիտորինգի ծրագիր և 2006թ. մոնիտորինգի արդյունքներն ու առաջարկությունները ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարությանը: Դրանից հետո գրասենյակի կողմից կազմակերպվել է քննարկում մարդու իրավունքները և բանակը թեմայով՝ զինված ուժերի համակարգված քաղաքացիական վերահսկման հնարավոր ոլորտները նախանշելու համար: Քննարկմանը մասնակցել են ՀՀ պաշտպանության նախարարության, պետական այլ գերատեսչությունների աշխատակիցներ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ: Գրասենյակը հետևում է կլոր սեղանի մասնակիցների կողմից արված առաջարկությունների իրականացմանը:

***Այլընտրանքային զինվորական ծառայության ներմուծում.*** Գրասենյակը հանգամանորեն հետևել է «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքի իրականացմանը, մասնավորապես, կապված համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվողների հետ: 2006թ. նոյեմբերին օրենքի հնարավոր բարեփոխումները իշխանությունների հետ քննարկելու նպատակով գրասենյակը կազմակերպել է կլոր սեղան Հայաստանում այլընտրանքային ծառայության և համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվողների հետ կապված իրավիճակի վերաբերյալ:

***Խղճի, կրոնի և դավանանքի ազատություն.*** Մշակման փուլում է գտնվում «Կրոնական ազատության մասին» նոր օրենքը և գրասենյակը համաձայնել է աջակցել ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության օրենքի նոր հայեցակարգի վերաբերյալ կլոր սեղան-քննարկում կազմակերպելու միջոցով կառավարական և հասարակական համագործակցության հիմք դնելու նախաձեռնությանը:

Գրասենյակը նաև հետևել է «Ազգային փոքրամասնությունների» մասին օրենքի մշակմանը, որը հաջորդել է «Փոքրամասնությունների մասին եվրոպական կոնվենցիայի» և «Լեզուների մասին խարտիայի» իրականացմանը:

***Հասարակության իրազեկում մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ.*** Գրասենյակն աջակցել է մի շարք թեմատիկ համաժողովների, սեմինար-քննարկումների, ուսանողների իրազեկության բարձրացման սեմինարների կազմակերպմանը և մարդու իրավունքներին առնչվող նյութերի տպագրմանը: 2006թ. գրասենյակն աջակցել է հանդուրժողականության, արդար դատավարության և ընդդեմ խոշտանգումների թեմաներով տեսահոլովակների

պատրաստմանը: Տեսահոլովակների նպատակն է իրազեկել հանրությանը և Հայաստանի քաղաքացիների շրջանում բարձրացնել հիմնական մարդու իրավունքների մասին պատկերացումը: Տեսահոլովակները եթեր են հեռարձակվել Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ: Գրասենյակը շարունակել է նաև 2005թ. «Հանդուրժողականություն մշակույթի միջոցով» ծրագրի երկրորդ մասի թողարկումը DVD-ով:

***Ժողովրդավարացման ոլորտ***

***Աջակցություն մամուլի և տեղեկատվության ազատության հարցերում.*** 2006թ. գրասենյակն ակտիվացրել է իր աշխատանքները մամուլի ազատությանն ու տեղեկատվության ազատությանը առնչվող հարցերում հանրային քննարկումներ ծավալելու և կառավարությունն ու քաղաքացիական հասարակությունը ներկայացնող համապատասխան շահագրգիռ կողմերի համար կարողությունների զարգացման աջակցություն ցուցաբերելու գործում: Այս ոլորտում իր հիմնական գործընկերների հետ համատեղ գրասենյակը կազմակերպել է մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ սեմինար մամուլի պատասխանատվության և լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմների լավագույն միջազգային փորձի թեմայով, համաժողով՝ Հայաստանում տեղեկատվության ազատության մասին օրենքի իրականացումը քննարկելու համար և միջոցառում՝ «Հայաստանի Հանրապետությունում ռադիոհեռուստատեսության բնագավառում հեռարձակման թվային համակարգի ներդրման ծրագրի» նախագծի վերաբերյալ ԵԱՀԿ փորձագիտական եզրակացությունը ներկայացնելու համար, որը ՀՀ կառավարության խնդրանքով պատրաստվել էր Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կողմից:

Լրատվության օրենսդրության հարցերով աշխատանքային խումբը, որը լրատվամիջոցների ոլորտում տեղական և միջազգային ակտիվ կազմակերպությունների ոչ պաշտոնական ֆորում է հանդիսանում, որի աշխատանքները համակարգվում են գրասենյակի կողմից, շարունակել է առաջարկություններ տրամադրել լրատվամիջոցների ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը բարելավելու և իշխանությունների ու քաղաքացիական հասարակության միջև երկխոսությունը խթանելու համար: Սա ներառում է լոբինգը լրատվամիջոցներին առնչվող օրենքների բարեփոխման մի շարք նախաձեռնությունների հարցում և լրատվության օրենսդրության հարցերում փորձառությամբ աջակցելը: Աշխատանքային խմբի անունից գրասենյակը գրություններ է ուղարկել ՀՀ իշխանություններին՝ մտահոգություն արտահայտելով Հայաստանի լրատվության և տեղեկատվության ազատությանն առնչվող օրենսդրության թերությունների և լրագրողների նկատմամբ բռնարարաքների վերաբերյալ:

Հունիս ամսին ՀՀ կառավարության հրավերով պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչը: Այցի նպատակն էր գնահատել մամուլի ազատության իրավիճակը՝ հատուկ ուշադրություն դարձնելով իրավական դաշտում ակնկալվող փոփոխություններին, որոնք պահանջում էր 2005թ. նոյեմբերին

ընդունված սահմանադրությունը: Ներկայացուցչի կողմից հուլիս ամսին հրապարակված «Մամուլի ազատության իրավիճակը Հայաստանում» զեկույցն իր մեջ ներառում էր մամուլին առնչվող իրավիճակի վերլուծություն և գործնական առաջարկություններ երկրում մամուլի ազատությունը բարելավելու համար: Տարվա կեսից կառավարության և քաղաքացիական հասարակության հետ համատեղ գրասենյակը խրախուսել և հետևել է զեկույցի մեջ ներկայացված առաջարկությունների իրականացմանը:

***Պայքար մարդկանց թրաֆիկինգի դեմ.*** 2006թ. գրասենյակը միջկառավարական հանձնաժողովին տրամադրել է փորձագիտություն և տեխնիկական աջակցություն՝ Հայաստանում թրաֆիկինգի դեմ պայքարի ազգային քաղաքականություն և գործողությունների ազգային երկրորդ ծրագրի մշակման և վերանայման հարցում: Հունիս ամսին գրասենյակը՝ ԱՄՆ պետդեպարտամենտի և ՀՀ շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիկինգ) միջգերատեսչական հանձնաժողովի հետ համագործակցությամբ, կազմակերպեց կլոր սեղան՝ քննարկելու թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների ազգային առկա ծրագրի իրականացումը և գործողությունների նոր ազգային ծրագրի մշակումը, որտեղ մեծ ուշադրություն պետք է հատկացվեր երկրում թրաֆիկինգի իրավիճակի մասնակցային գնահատմանը և քաղաքացիական հասարակության հետ համատեղ իրականացվող տարբեր գերատեսչությունների պատասխանատվությունների հստակ սահմանմանը: Հակաթրաֆիկինգային ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրի մշակման ոլորտում իրենց փորձը կիսելու համար գրասենյակի կողմից հրավիրվել էին միջազգային փորձագետներ ԵԱՀԿ հակաթրաֆիկինգային աջակցության բաժնից և Չեխիայի Հանրապետության ներքին գործերի նախարարությունից:

Կլոր սեղանից հետո, 2006թ. հոկտեմբերին ՀՀ շահագործման նպատակով մարդկանց ապօրինի փոխադրման, տեղափոխման և առուվաճառքի (թրաֆիկինգ) միջգերատեսչական հանձնաժողովի, համապատասխան միջազգային կազմակերպությունների և տեղական հասարակական կազմակերպությունների անդամների համար գրասենյակը նախաձեռնեց թրաֆիկինգի միջոցառումների գնահատման և կարողությունների զարգացման երկօրյա սեմինար-խորհրդակցություն «Հակաթրաֆիկինգային ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր» թեմայով: Հայաստանում թրաֆիկինգի միջոցառումները գնահատելու և սեմինար-խորհրդակցությունը անցկացնելու նպատակով հրավիրվել էին երկու միջազգային փորձագետներ Չեխիայի Հանրապետության ներքին գործերի նախարարությունից և Միգրացիոն քաղաքականության ձևավորման միջազգային կենտրոնից: Թրաֆիկինգի միջոցառումների գնահատման նպատակը գործողությունների ազգային ծրագրում ներգրավված տեղական մարմինների կարողությունների գնահատումն էր և գործողությունների ազգային նոր ծրագրի մշակումը: Սեմինար-խորհրդակցության ժամանակ ներկայացվեցին մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարելու ազգային ռազմավարություն և գործողությունների ծրագիր մշակելու, իրագործելու և գնահատելու լավագույն մեթոդներն ու միջոցները:

Գրասենյակը տրամադրեց փորձագիտական կարծիք հակաթրաֆիկինգային և զոհերի ու վկաների պաշտպանության առկա օրենսդրության և օրինագծերի վերաբերյալ: Ներկայացվել են տեղական

հասարակական երկու կազմակերպությունների կողմից գրասենյակի աջակցությամբ իրականացված Հայաստանում թրաֆիկինգի իրավիճակի հետազոտությունները: Հետազոտությունների նպատակն էր բացահայտել, թե ինչպիսին է թրաֆիկինգի երևույթի պատկերացումը Հայաստանի տարբեր սոցիալական խմբերի շրջանում և որոնք են թրաֆիկինգի առումով առավել խոցելի սոցիալական խմբերը:

Հուլիս ամսին գրասենյակը Ուկրաինայում ԵԱՀԿ ծրագրերի համակարգողի գրասենյակի հետ համատեղ Հայաստանի հասարակական կազմակերպությունների և կառավարության ներկայացուցիչների համար կազմակերպեց ճանաչողական այց Ուկրաինա: Թրաֆիկինգի զոհերին աջակցություն ցուցաբերող հասարակական կազմակերպությունների և Ուկրաինայում թրաֆիկինգի դեմ պայքարով զբաղվող պետական մարմինների փորձին ծանոթանալու նպատակով կազմակերպված ուսումնական այցին մասնակցում էին Հայաստանի քաղաքացիական հասարակության երկու հիմնական կազմակերպությունների չորս ներկայացուցիչ և երկու ներկայացուցիչ կառավարությունից:

***Տեղաշարժի ազատություն/Միգրացիա.*** Արձագանքելով կառավարության և քաղաքացիական հասարակության խնդրանքին՝ գրասենյակը շարունակեց փորձագիտական աջակցության տրամադրումը միգրացիայի կառավարման հարցում՝ հիմնականում ուշադրություն դարձնելով միգրանտների իրավունքների պաշտպանության, վերադարձած միգրանտների և վերաինտեգրման հարցերին: Հայաստանի մի շարք մարզերում և Երևանում շվեյցարական CIMERA հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպվել են կլոր սեղան-քննարկումներ վերադարձած միգրանտների հարցերի շուրջ: Գրասենյակը շարունակել է իր աշխատանքը միգրացիոն օրենսդրության ոլորտում (օրենսդրության նախագծի փորձագիտական եզրակացություն, նոր փոփոխությունների օրինագծի կամ իրավական ակտերի պատրաստում): Գրասենյակը տեղի հասարակական կազմակերպության միջոցով իրականացրել է «*Աշխատանքային միգրացիան Հայաստանից 2002-2005թթ.*» հետազոտություն՝ ներկայացնելով աշխատանքային միգրացիայի հոսքերի պատկերը և հատկանշելով հետագա խորը վերլուծության հնարավոր ուղղությունները:

***Գենդերային հարցեր.*** Գրասենյակը աջակցություն է տրամադրել 2004թ. ընդունված Կանանց առաջխաղացման գործողությունների ազգային ծրագրի իրականացման համար՝ նպաստելով տեղական գենդերային փորձառության է՛լ ավելի զարգացմանը, այսինքն՝ օգնելով տեղեկությունների և փորձի փոխանակմանը կառավառության պաշտոնատար անձանց շրջանում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և պետական գերատեսչությունների ներկայացուցիչներին ծանոթացնելով այլ երկրների լավագույն փորձի հետ: Գրասենյակն աջակցել է նաև ԺՀՄԻԳ-ի ծրագրերի իրականացման հարցում, որոնց նպատակն է խթանել կին առաջնորդների գործունեությունը և կանանց ու տղամարդկանց իրավահավասարության թեման ազգային կրթակարգում ներառելը: Գրասենյակն իրականացրել է ծրագիր՝ ուղղված գենդերային իրավահավասարության վերաբերյալ իրազեկության բարձրացմանը՝ երիտասարդության շրջանում կազմակերպելով շարադրության մրցույթ:

*Ժողովրդավարական գործընթացի խթանում.* Գրասենյակը ոստիկանության ակադեմիայի և այլ ուսումնական հաստատությունների ուսանողների համար անցկացրեց դասընթացներ և կազմակերպեց սեմինար՝ սոցիալական զարգացմանը, ժողովրդավարությանը և օրենքի գերակայությանը վերաբերող մի շարք ընթացիկ հարցերի շուրջ բանակցություններ ծավալելու նպատակով: Դասընթացների նպատակն էր նաև օգնել ուսանողներին զարգացնել միջանձնային և հաղորդակցության հմտությունները:

*Հմուտ կառավարում*

*Աջակցություն ընտրական բարեփոխումներին.* 2007թ. մայիսին Հայաստանում կայանալիք ընտրությունների համատեքստում գրասենյակը շարունակել է իր ընտրական աջակցության ծրագրերը՝ կենտրոնանալով և՛ ընտրական օրենսդրության, և՛ վարչարարության բարեփոխումների վրա: Մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովի խնդրանքով գրասենյակն աջակցել է Ընտրական օրենսգրքի բարեփոխմանը՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի և Եվրախորհրդի Վենետիկյան հանձնաժողովի եզրակացություններին համապատասխան: Ազգային ժողովին տրամադրվել են մի շարք գրավոր եզրակացություններ՝ արված միջազգային փորձագետների կողմից: Բացի այդ, ԵԱՀԿ ԺՀՄԻԳ և Վենետիկյան հանձնաժողովի փորձագետները սեպտեմբերին այցելել են Երևան և քննարկել են իրենց առաջարկությունները ԱԺ խմբակցությունների ներկայացուցիչների հետ: Հույսով ենք, որ ընդունված փոփոխությունները արդյունավետ կլինեն Հայաստանում ընտրությունների անցկացումը բարելավելու տեսանկյունից:

Օրենսդրության բարեփոխումներին աջակցելուն զուգահեռ գրասենյակն աջակցել է նաև ընտրական վարչարարության բարելավմանը: Մասնավորապես, գրասենյակը տրամադրել է աջակցություն ընտրական գործընթացում ներգրավված պաշտոնյաների ուսուցման համար: Գրասենյակի աջակցությամբ մշակվում են ընտրական վարչարարության վերաբերյալ ձեռնարկներ: Այս ձեռնարկները կօգտագործվեն ընտրական հանձնաժողովների անդամների ուսուցման համար, ինչպես նաև կօգտագործվեն որպես գործնական ձեռնարկներ ընտրական գործընթացում ներգրավված բոլոր անձանց կողմից:

Գրասենյակը նաև աջակցել է քաղաքացիական հասարակության և միջազգային կամակերպությունների համագործակցությանը ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչության հետ, որը, ըստ Ընտրական օրենսգրքի, հանդիսանում է ընտրացուցակների հարցերով զբաղվող լիազոր մարմին: Հույս ունենք, որ 2007թ. ընթացքում կարձանագրվեն հետագա հաջողություններ՝ ընտրացուցակների բարելավման և լրացման ուղղությամբ:

Գրասենյակն իր գործունեության մեջ հատուկ ուշադրության է արժանացրել ընտրությունների ոլորտում միջազգային կազմակերպությունների գործունեության համակարգումը՝ 2002թ.-ից գրասենյակի կողմից համակարգվող ընտրությունների հարցերով զբաղվող միջազգային աշխատանքային խմբի միջոցով: Աշխատանքային խումբը բաղկացած է միջազգային դոնոր կազմակերպություններից, որոնք ներգրավված են ընտրությունների ոլորտում աջակցության ծրագրերում: Խմբի պարբերական հանդիպումները ծառայում են որպես տեղեկատվության և տեսակետների փոխանակման և անդամների միջև

գործունեության համակարգման միջոց: Մասնավորապես, գրասենյակը նպատակ ունի համակարգել 2007թ. ընտրություններից առաջ ընտրությունների ոլորտում տրամադրվելիք աջակցությունը և խուսափել միջազգային կազմակերպությունների գործունեության կրկնօրինակումից և ծրագրերի համընկնումից:

*Աջակցություն Ազգային ժողովին*. Նախորդ տարիների հաջող փորձից ելնելով՝ գրասենյակը շարունակել է Ազգային ժողովին աջակցության իր ծրագիրը, որն ուղղված է խորհրդարանի աշխատակազմի մասնագիտական կարողությունների բարձրացմանը: Այս ծրագիրն իրականացվել է ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի հետ համագործակցությամբ: Ծրագրի առաջին փուլն իրականացվել է որպես երեքշաբաթյա համապարփակ ուսուցման ծրագիր, որը կազմակերպվել էր հունիսին Երևանում: Ծրագրին մասնակցել են Ազգային ժողովի վարչությունների մասնագետները: Երկրորդ փուլը փորձի փոխանակման գործնական ծրագիր էր՝ այցելություն Բելգիայի թագավորության Սենատ և Ներկայացուցիչների պալատ, ինչպես նաև այցելություն Եվրոպական խորհրդարան: Փորձի փոխանակման ծրագրին մասնակցել են ծրագրի առաջին փուլից ընտրված մասնակիցները: Գրասենյակը ԱԺ վարչություններին տրամադրել է նաև մասնագիտական գրականություն:

*ԱԳՆ աշխատակազմի մասնագիտական կարողությունների հզորացում.* Գրասենյակի կողմից կազմակերպվել են մի շարք դասընթացներ Արտաքին գործերի նախարարության աշխատակազմի համար: Դասընթացներն անցկացնելու համար հրավիրվել էին մի շարք հայաստանյան և միջազգային փորձագետներ: Դասընթացներն ուղղված էին ԱԳՆ աշխատակիցների մասնագիտական և վերլուծական կարողությունների բարձրացմանը, մասնավորապես՝ միջազգային իրավունքի և միջազգային անվտանգության ուսումնասիրման ժամանակակից մոտեցումների և վերլուծական մեթոդների կիրառման ուսուցմանը:

*Հակակոռուպցիոն ծրագրեր*. Գրասենյակը շարունակել է համակարգել միջազգային հակակոռուպցիոն աշխատանքային խումբը, որը բաղկացած է հակակոռուպցիոն ծրագրերում ընդգրկված միջազգային կազմակերպություններից և դեսպանություններից: Գրասենյակի համակարգմամբ աշխատանքային խումբը մանրազնին հետևել է կառուպցիայի դեմ պայքարի հետ կապված զարգացումներին, հատկապես կառավարության 2007-2010թթ. Հակակոռուպցիոն ռազմավարության մշակման գործընթացին:

Գրասենյակն աջակցություն է տրամադրել ՀԿ-ների Հակակոռուպցիոն կոալիցիային՝ աջակցելով կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության ջանքերին: Գրասենյակի աջակցությամբ կոալիցիայի անդամ ՀԿ-ները իրականացրել են մի շարք ծրագրեր Ազգային հակակոռուպցիոն ռազմավարության մեջ որպես կոռուպցիոն ռիսկ պարունակող ոլորտներում, ինչպիսիք են պետավտոտեսչության գործունեությունը, առողջապահությունը, կրթությունը, բանակը, դատական համակարգը, հանրային ծառայությունները և տեղական ինքնակառավարումը:

Գրասենյակի աջակցությամբ մշակվել և տպագրվել է մի գործնական ձեռնարկ, որում ներկայացված է քաղաքացիների՝ Տեղական ինքնակարգավորման մարմինների /ՏԻՄ/ հետ հարաբերությունների համար

անհրաժեշտ գործնական տեղեկատվություն: Ձեռնարկը պարունակում է օրենսդրության, ընթացակարգային հարցերի, ՏԻՄ մարմինների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ գործնական տեղեկատվություն: Ձեռնարկն օգտագործվել է նաև Գեղարքունիքի մարզի երեք համայնքներում դասընթացների կազմակերպման համար: Ակնկալվում է, որ այս դասընթացները հաջողությամբ ավարտած մասնակիցները հետագայում կմասնակցեն հանրային ընդունարանների աշխատանքին:

Գրասենյակի աջակցությամբ մշակվել և հեռարձակվել է սոցիալական գովազդի տեսահոլովակ, որն ուղղված էր Հակակոռուպցիոն կոալիցիայի աշխատանքների և Կոալիցիայի անդամ ՀԿ-ների թեժ գծերի մասին իրազեկության բարձրացմանը:

Գրասենյակի կողմից իրականացվել են հանրային ընդունարանների ստեղծմանն ուղղված մի շարք փորձնական ծրագրեր: Հանրային ընդունարանների աշխատանքն ուղղված է կոռուպցիայի մասին հանրային իրազեկության բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին, ինչպես նաև որոշակի ոլորտներում կոռուպցիոն դեպքերի հետ առնչված քաղաքացիներին գործնական աջակցության տրամադրմանը: Այս փորձնական ծրագրերի հաջողությունից և դասերից ելնելով՝ ՀԿ-ների կոալիցիայի կողմից ստեղծված հանրային ընդունարանների ցանցը 2007թ. կիզորացվի և կընդլայնվի:

<u>Այլ գործունեություն</u>

2006թ. հոկտեմբերի 31-ին նոյեմբերի 1-ին կազմակերպված «*21-րդ դարի նոր սպառնալիքները և գլոբալ մարտահրավերները*» թեմայով միջազգային համաժողովի նպատակն էր զարգացնել հայ գիտնականների և նրանց արտասահմանյան գործընկերների միջև համագործակցությունը: Այս նախաձեռնության հիմնական նպատակն էր դարձնել այս համաժողովը տարեկան և այս միջոցառումն օգտագործել՝ խթանելու է՛լ ավելի ամուր և շարունակական համագործակցությունը: Այս առումով առանձնահատուկ նպատակներից էր համաժողովի արդյունքներն օգտագործել որպես կարողությունների զարգացման գործընթաց՝ ամրապնդված Հայաստանի և մարզերի ողջ իրականությունը գնահատող փաստաթղթի ձևավորմամբ և ընդունմամբ: Համաժողովին մասնակցեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների, Եվրոպայի և Հայաստանի գիտական համայնքի ներկայացուցիչներ: Համաժողովի ժամանակ քննարկված նյութերը տպագրվում են:

2003թ. սկսած գրասենյակը համագործակցել է Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական կենտրոնի՝ Հայաստանի կամավորական ծառայության հետ՝ Հայաստանում կամավորական շարժումը զարգացնելու և տարբեր երկրների երիտասարդության հետ կապերի ձևավորմանը խթանելու համար: Հաշմանդամ երեխաների վերականգնողական կենտրոնին աջակցության տրամադրումը արդեն ավանդական երևույթ է դարձել: Այս կենտրոնի հիվանդներն են հենաշարժական համակարգի խանգարումներ և սրտանոթային համակարգի հիվանդություններ ունեցող երեխաները: Այս երեխաները առավել քան ուրիշները ուշադրության և խնամքի կարիք ունեն և կամավորներն անում են հնարավոր ամեն ինչ՝ կենտրոնում նրանց անցկացրած ժամանակը արժեքավոր դարձնելու համար: 2006թ. աշխատանքային ճամբարը շարունակեց

նախաձեռնությունը. եվրոպական և ասիական 14 երկրների կամավորներ՝ հայ կամավորների հետ միասին հիանալի գործ կատարեցին հաշմանդամ երեխաների համար՝ աշխատանքները կազմակերպելով տարբեր աշխատանքային խմբերի (նկարչություն, քանդակագործություն, ազգային և արտասահմանյան երգերի ուսուցում, ինտելեկտուալ խաղեր, անգլերեն լեզվի դասընթացներ և ֆիզկուլտուրա) միջոցով: Կամավորները նաև աշխատեցին կենտրոնի տարածքում գեղեցիկ այգի, հանգստի վայր, լճակներ և սպորտային հրապարակներ ստեղծելու ուղղությամբ:

Տպագրվեց ԵԱՀԿ դասագրքի վերամշակված տարբերակը, որի նպատակն է խթանել Հայաստանում ԵԱՀԿ արժեքների առավել լավ ըմբռնումը:

ԵԱՀԿ ծրագրերի իրականացման Սյունիքի նոր ներկայացուցչության միջոցով և Եվրոպական միության համատեղ ջանքերով կազմակերպված Եվրոպական ֆիլմերի փառատոնը Կապան (Սյունիք) քաղաքում ուղղված էր եվրոպական արժեքների խթանմանը և մշակութային փոխանակմանը՝ Հայաստանի մարզերի բնակչության ներգրավմամբ: